Կեդրոնատեղւոյ ամենայն ան-
գամ մի՛ եւ ելնել,
Տարեկան գինն 24 ղրուշ.
Վեցամսեայ 12 ղրուշ.
Ամէն համար 40 փարայ.

ԼՐԱՏՈՒ

Որ կամի ստանալ լրագիրս
Դիմեսցէ Երզնկայ Առաքելոց
խմբագրին սորին ձայնիւ.
Լրագրոյս վերաբերեալ նամակներ
ուղղելի են սորին հասցէին.

# ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՈՅ

## ԹՌՈՒՑԵԱԼ ԹԵՒՕՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ

### Ի ՄԱՅՐԻԿԱՆՍ ԱՌԱՔԵԼԱՇԷՆ ՑԻՆԾՂԱՆԵԱՆ ԼԵՌՆԱՑ

### ԻՆՉԱՅՍ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՀՌՉԱԿԻ ՈՍՏԷՆ.

Ա. ՏԱՐԻ · ԹԻՒ 4 . 1863 . ՄԱՅԻՍ 15

Արծուիկ իւր անուան եւ դիրութեան համեմատ փութկացաւ իւր պատկերը։ Այս անթիւ ուրիշ բան չունիմք խօսելու, բայց միայն մեր շնորհակալիքը ողջերթնիս Մշոյ ընտիր մեր բարեկամ ուսումնասէր Պ. Պապազեանին, որ այս Արծուիս Պիտոյն սակայն այսպիսի փութաջրութեանց մէջ բաւական վարժ եւ յաջողակ է. Արծուիկիս պատկերի փորագրութիւնը իւրն աշխատութեան գովեստը թող համարի.

## ԱԶԳԵՑԻՆ ԴԵՐՐՈՐԵԱԼՆ

### ԺՈՂՈՎ

ի Մուշ Աշան.

Այս նորահաստատ ժողովքի վրայ ծանօթութիւն և բերկրութեան լուրը ամլէն յառաջ: կուզենք համառօտը հրն վերչութեանց վրայօք ալ աչք ձգել ու անցնել. ուստի թէ փոքր ինչ կ'երկարի խօսքերնիս, թող ներեն ընթերցողք.

Համանկիս լուսաւորութեան խմատութեան եւ մարդկային կրթութեանց օրէնքը ա՛յլ չէ ներեր, որ մէկ կամք շատ կրթութիւնքնեզ վարէ. մէկ հրաման կամ շունչը միայն շատ հոգիներ ձգէ։

Աշխարհ փոխեց ու հանգչաւ, այն ժամանակն անցաւ, որ մէկ իշխան կամ Առաջնորդ մը. Լեւոն կամ Քահանայն՝ ինչ որ կամենային հրամայէին, եւ ինչ որ հրամայէին պիտի կատարուէր. ով կարող էր ձայն հանել, դէմ դնել, թէեւ խրատանք ունենար. իր պատասխանն առ գանք կամ պատուհաս էր. խրատանք կ'վատէր, եթէ ծոյլը, կամ գոգը կամ շղթայկը լցած ու քարուցած մեռաւորին կամ խիստաւորին քիթը երթար.

Խրատանք վճռող կոչմունքն էր։

Խրատանց տէրը բռնութիւնն էր։

Այսպէս կատարեալ աշխարհիս ազգմը ամբողջ Հայաստանն է, եւ ի մէջ Հայաստանին այս մասամբ քան զամէն թշուառ Տարօնն է։ Տարօն իւր աւերումը, այսչափ ցաւք եւ թշուառութիւնք այս կերպ փոփոխութիւնից է առաջեր քրքրէ հաստակութեան սիրտ ու երիկամունքը, քննէ նորա անցեալ ժամանակն ու ներկայ վիճակը, հարստահարութեանց հնոցի գոռացածներու հարուածները ու մահոց մէջ վերքերը յանդիման կը բանէն բեզ, եւ կ'հաստատեն աստծու ճշմարտութիւնը։

Առաջնորդ մը Հայաստանին հօտ հովուե-

լու, նորա պաշտօնեայ եւ պաշտպան լինելու, երկնային եւ ազգային օրէնքով ընտըրուած պարտաւորած կուգար իւր վիճակը. անդ քաղաքացի քանիմը Իշխան օգանիր, անդ մեծագլուխ քանիմ հին Բէկներ իւր շրջապատը կ՚առնէր . Նա նոցա՝ եւ նոքա սորա հետ դաշինք կ՚դնէին, միեւնոյն յոյս եւ ապաւէն լինել կ՚ուխտէին, յողջոյն սիրոյ եւ միութեան զիրար կ՚համբուրէին :

Կը դառնար Առաջնորդ՝ «Ազգը ձեզմով պետի կառավարուի . դուք ինձ աջ եւ ահեակ պիտի լինիք . կ՚ուխտեմ, առանց ձեր խորհրդին եւ կամքին բան չառնել, դուք իմ ճրագներն էք, իմ աչքի լոյսն էք . . . » կ՚ասէր . եւ երդում կ՚ընէր . եւ իրեն համար մեծ խոհեմութիւն կ՚համարէր :

Անդին Իշխանք, կամ մեծ համարուածները իրենց գլուխը կ՚խոնարհէին, «Ծառայ եմ ծառայ եմ Սրբազանիդ, հաւատ՚ը անգամ ծառայ եմ, կ՚ասէին, մեր խնդիրքն ալ այդ էր ձեր սրբազնութենէն . մեք քո ամենահաւատարիմ եմք . ջան կայ քո ուղուր կ՚դնենք . առոր անոր խօսքին ականջ մի կախեր, խե՞լք ունեցիր որ մեզ ճանչցար . քո հաստատութիւնդ, շահաւէտութիւնդ, պայծառութիւնդ, փառաւորութիւնդ, ամէն մեր ձեռքընէ . . . » — Կամին ասել նոյնպէս եւ անարգութիւնդ ու անհաստատութիւնդ մեզմէ է : Ո՛չ, իբրու տէր կենաց եւ մահու :

Ահա ինչ կ՚լինէր այն էկող Առաջնորդը, եթէ՝ մեղայ Աստուծոյ, արդարութեան ու ազգասիրութեան ընթացք մի ունենար . ընթացքմը, որ բոլորովին հակառակ էր իւր յուսացելոց կամաց . նոցա կամքը սովոր էին միշտ իշխել մեծին, ճնշել խոնարհին, սասանեցուցանել զհզօրն, եւ ճմլել առոտն զգըլուխ տնանկին . յայնժամ այն Առաջնորդը յանկարծ պիտի կծկէր զիւր ոտը, առնուր ու համբառնար զիւր փոստը :

Հայաստանի մէջ ինչ տեղ Առաջնորդ շահամոլ իշխաններէն գոհէ . կամ այնպիսիք իրենց Առաջնորդի հետ սէր ու համակրութիւն ունին . (այս նոյն վիճակի հասարակութեան . այն տեղի հասարակութիւնը տակաւին կոյր է և համր, կ՚մարթուի կ՚խեղդուի առանց ձայնի, առանց գոնէ աղաղակմը հանելու . ո՛հ սիյելութիւն գթութիւն պէտք է այն տեղին, լոյսմը՝ այն խաւարին :

Թողունք ընդ հանուրը, ուր տեղ տեղ արդէն սկսերէ մի նոր շարժում . ուր հասարակութիւն իւր իրաւանց մեծութիւն ու տիրութիւնը ճանչցեր եւ պոռացեր բողոքերէ . Տարօն, ողորմելի Տարօն, դու ուր էիր մնացեր : Ոչ չէ . քո մէջ ալ Առաջնորդներ ընդ երեկոյս կ՚հանդչէին, ընդ առաւօտս կը թռչէին . Ս. Կարապետիվանուց բարձրադիր դարերէն քանի Առաջնորդներ ի վայր գլորվերեն, որ յարդարութենէ որ յանիրաւութենէ, որ այսպէս որ այնպէս . սակայն սոցա գընալուն ու գալուն ինչ բան կ՚իմանար հասարակութիւնը . Հարցուցենք՝ եւ ոչ ոք գիտէ :

Որմեր գիւղի ծերունի Տ . Աւետիս քահանային պատահելով հարցուց միանգամ Հայրիկը, թէ « Տէր հայր . Այս Առաջնորդութեան շրջան որչափ ժամանակ է » . Նա գլուխը ցնցելով եւ ծիծաղելովմը այս սուր պատասխանը տուաւ . — Ոտք մի սոլ մաշեցընելու չափ :

Երբ դարձաւ կրկին հարցուց թէ . — Ինչպէս կառավարուեր է այս ժողովուրդը, Տէր հայր, որ այսչափ խեղճ և ողորմելի է . Պատասխանեց այս նշանաւոր խօսքերով, եւ ախ քաշելովմը — « Հայրիկ, ըստ հոգւոյ թէ ըստ մարմնոյ . մէկ մասին մի հարցուցեր ընաւ . բայց միւս մասին՝ ծուռ է այն Աւետարան որ կ՚կարդանք, « Ահա ես առաքեմ զձեզ իբրեւ ոչխարս ի մէջ գայլոց » . զոր Տէրն ասաց Առաքելոց . հիմակուան համար կարդանք » , Ահա ես առաքեմ զձեզ իբրեւ գայլ ի մէջ ոչխարաց » : Նաեւ համարձակ ասաց, — Հայրիկ . դու որ երամէն առաքուած ես, չ գիտեմ :

Իրաւունք ունիս Տէր Աւետիս, իրաւունք ունի քեզ հետ եւ ողջ ժողովուրդը տարակուսելու, վասն զի խիստ քիչ անգամ տեսած է հովիւմը, որ սիրող քաջ և անձնադիր լինի իւր հօտին :

Մուշը մշաւ, Տարօն տաւան, ո՛վ ձեռք պարզեց իւրեց . տարօղը կերաւ, կերօղը մարսաւ : Այս քեզ խաւարին ժամանակ . արդեօք քո դժոխային որովայնի մէջ ինչեր չէ կան : ( Կըղըրոնեան ) :

թիւն. խրախճանչի ի Թաղերու մէջ, որոնք քաղ կարեաց եւ ըստ բաղձանաց շաբաթական ամսական տարեկան եւ առանձին նուէրքներով կը կատարէին վարժարանները. Վարժարանները՝ որոց մէջ Հայրենեաց գեղեցիկ յոյսեր կը պատրաստուին. եւ Տարօն զուարթացին կրկնեց իւր աչերը, կարծես, եւ դեռ այն առաջ չեղածը, զոր մեք տարագոյ կը կոչենք, այսօրվընէ կոկոծ զուարճանալ եւ բերկրիլ։

Մուշ սուան երեք վարժարան ունի առայժմ քաղաքական բարեկարգ, մէկն ի Սուրբ Մարինէի Թաղը. մէկն ի Հոյոց Թաղ. մէկն ի Մերին Թաղ. Տասն Թաղն ալ կը ջանայ, եւ կը յուսանք որ շուտով տեսնանք այն Թաղի մէջ վարժարանն ալ։

Այսուհետեւ Տարօնոյ գեղերու մէջ մէկ քանի առաջ մեր գիտցած վարժատուներին ալ յիշենք համառօտը ի բարեկենդանէ եւ յօրինակ այլ գեղերուն, որպէս անգամ Թաղով նոցա բարերարաց անուններ յիշատակել. Վարժատունն՝ ի Ս[illegible] խարան. Վարժատունն [illegible] բին, Վարժատունն՝ ի Ցրօնք. եւ մի Ներքսեան ընկերութիւն կազմեր է ի Գ... գեղ. որոց ջանք եւ նպատակն է վարժատուն հաստատել նոյն գեղի մէջ։

Ի վերջոյ մեր եւ համայն Աշխարհաց ուրախութեան հետ բաջաջերութիւն եւ գոհութիւն ձօնենք վերոյիշեալ ընկերութեանց ու վարժարաններուն, եւ բարեմաղթենք նոցա հանդէպ յաջողութեան յարատեւութեան եւ սրբինաւոր յառաջադիմութեան համար. Տէր մեզ Տէր։

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բայց հետեւ այն նշանաւոր տօնավաճառը (փանայր) արգիլեալ է Մշոյ Ս. Կարապետի վանքէն, որ կը կատարուէր ամէն տարի Վերափոխման Աստուածածնին եւ Ս. Խաչի նաւակատեաց օրերը։ Այս կանխապէս այսօրինակ կծանուցանէ. Թաղերու խմբաւոր մեծամեծաց դասատներ եւ ռամիկներ. կղու ը չաշխատոյն բաներկայել, վաճառքներ գնել. կերպ կերպ պատրաստութիւններ ունենալ, Ս. Վերափոխման Ս. Կարապետ տօնավաճառութեան գալ. խնդրեալ արգիլեալ է։

Այն ամփոփել, Փառաւոր եւ վատթար ակնաբութիւնը բառնալու համար գուցէ յառաջացաւ այլ խորհուրդ ըշխել, բայց պէս պէս վէպերով չէր յաջողուած։ Հայրենեաց աներեւոյթ որ անցեալ տարի երբեմն ուխտաւոր ի Ս. Կ. խոստեւ եղածէր Վարդապետն։ տեսնալով այս ամէն անկարգութիւնք անկարգութիւնք եւ կերպ կերպ մեղքեր ու վնասներ պատճառել այս տօնավաճառութիւնն ցայս օր հնդիկ յղացաւ եւ մտաբերեց զգոյշ բառնալ տալու կահօրէն առաջարկել. Այսօր անոր երբեւ զէտ այն Ս. Սինոդն առաջարկեց Կոստանդնուպոլսոյ Ս. հօրը, որք համաձայն հաւանեցան արգելել ու խափանել տալու զայն։

Բայց թէ ինչ կար Թող տալու եւ թէ ինչ կայ արգիլելու մէջ, զայն կ'թողումք բարեպաշտօն եւ խոհական անձանց կշռել եւ դատել. եւ զոր առանձին շիջարգիւկանաւ կծանուցանէ Հայրենի խոհելով ըստ բարեպաշտութեան Ազգային Քրիստոնէական հոգւոյն. եւ քննել վ՛ ըստ որբութեան վանուց եւ ըստ երկիւղածութեան ուխտաւորաց վարուց, որոնք այնպիսի օրերը (աւուր, թերեւս չէ բաներ տալ) կապականութիւն առ հասարակ եւ կղտանանն պղծութեան տեղիք. թող ուրիշ ինչքան վնասներ վանքին։ ինչքան գայթակղութիւն անձանց։

Նա այժմ միայն այս կարեւոր ծանուցումն հրատարակելով՝ չերմեռանդ ուխտաւորաց համար խօսք չունինք, երբ ուզեն կարող են գալ. բայց տօնավաճառներուն եւ այսպիսեաց սա թուխտի եկողներուն համար կասենք որ Քրիստոնէական եւ վանական օրինաց ընդդէմ է, ուստի ամէն կերպով արգիլուած է այնպիսեաց վանքս մէջ անգամ մտանել, որոնք կուգան վաճառել, գնել, գողանալ, չահել, եւ այլն. միրջապէս զՏէրն Աստուածոյ տաճարէն դուրս հանել ժողովք եւ... Այնպիսեաց Քրիստոսի խարազանը կը հանդիպի։ Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։

Խմբագիր Տարօնոյ Արծուիկին
Գ. Սրուանձտեանց Ծ. Վ. Արծրունի
Ի Տպարանի Վ. Արծրունեան
ի Տարօն Ս. Կարապետի Հ. Վանքը։